Դիտողություններ եւ առաջարկություններ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ

1. Նախագիծն առնվազն տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելք սահմանող դրույթի մասով չի բխում Նախագծի հիմնավորումից: Այսպես, հիմնավորմամբ իրավական որոշակիության ապահովման, անորոշություններից խուսափելու նպատակով ըստ էության առաջարկ է արվում գործող բլանկետային նորմերի փոխարեն սահմանել կոնկրետ/ինքնաբավ նորմեր: Սակայն նախագիծը այդպես էլ չի սահմանում կոնկրետ եւ ինքնաբավ կանոններ, քանի որ ամբողջությամբ պահպանում է բլանկետայնությունը Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանելով, որ արգելվում է քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչեր տարածելը: Ավելին, անգամ Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի տարբեր դրույթներով նախատեսված ոչ բոլոր տեղեկություններն են, որ կոնկրետ են, դրանցից որոշների (օրինակ՝ բռնության կամ քրեական ենթամշակույթի քարոզի) բովանդակությունը բացահայտելու համար նույնպես անհրաժեշտ է դիմել այլ իրավական ակտերի: Այս համատեքստում տեսալսողական հաղորդումների արգելքների դեպքերի հստակեցման փորձը հակառակը, թյուրըմբռնումների եւ տարընթերցումների տեղիք է տալիս: Օրինակ, անհասկանալի է Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի եւ նույն հոդվածի 4-րդ մասի (պահպանվել է գործող օրենքի ձեւակերպումը) հարաբերակցությունը: Պարզ չէ, թե ինչու՞ է մի դեպքում քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչեր տարածելը արգելվում, մեկ այլ դեպքում քրեական ենթամշակույթի քարոզը, որը նույնպես քրեորեն պատժելի եւ օրենսդրությամբ արգելվող արարքի կոչ է իր էությամբ, միայն ենթարկվում ժամային սահմանափակման: Այլ օրինակներ տես հաջորդ առաջարկներում: Նման պայմաններում գտնում ենք, որ Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի առաջարկվող խմբագրությունը չի բխում Նախագծի հիմնավորումից, թյուրըմբռնումների եւ տարաձայնությունների տեղիք է տալիս, ըստ այդմ կարող է արտահայտվելու ազատության ոչ իրավաչափ միջամտության առիթ հանդիսանալ, ուստի անհրաժեշտ չէ կամ պետք է ամբողջությամբ վերախմբագրվի:

2. Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում անորոշ է եւ պարզ չէ, թե Նախագիծը «նման նպատակ»-ի ներքո բռնություն և դաժանություն քարոզելու նպատակի կամ նույն մասի վերջին կետով նշված քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչեր տարածելու մեջ չներառվող ինչ նպատակ նկատի ունի: Եթե հնարավոր չէ հստակեցնել նման այլ նպատակները, ապա առաջարկում ենք նշված դրությում «կամ նման նպատակ» բառերը հանել, իսկ եթե նման այլ նպատակները հնարավոր է հստակեցնել, ապա առաջարկում ենք առնվազն «նման» բառից հետո ավելացնել «այլ» բառը:

3. Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով արգելվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական ատելություն բորբոքելու, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն սերմանելը կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն տարածելը: Այս դեպքում հասկանալի չէ, թե ինչու են նախատեսվում միայն խտրականության մի քանի դրսեւորումներ՝ անտեսելով խտրականության այլ դրսեւորումները (տես՝ Սահմանադրության 29-րդ հոդվածը):

4. Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ (Նախագծի հրապարակված տարբերակում թվագրումը խախտված է, 4-րդի փոխարեն նշված է 3-րդ) մասով (պահպանվել է Օրենքի գործող կարգավորումը) ժամային սահմանափակում է նախատեսում ի թիվս այլնի ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի եւ տեսալսողական հաղորդումների հեռարձակման համար: Նշված դրույթը հատկապես Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով հստակեցվող դեպքերի առկայության համատեքստում խնդրահարույց եւ անորոշ է այնքանով, որքանով «բռնություն» եզրույթը ներպետական օրենսդրությամբ ունի չափազանց լայն եւ տարբեր բովանդակություն եւ ներառում է ինչպես ֆիզիկական կամ սեռական բռնությունը, այնպես էլ հոգեբանական բռնությունը, տնտեսական բռնությունը եւ անտեսումը (տես՝ «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքը): Նման պարագայում գրեթե բոլոր ֆիլմերը եւ հաղորդումները, մասնավորապես դրամաների, մելոդրամաների, թրիլլերների, դետեկտիվների ժանրերի ֆիլմերը կամ սոցիալական թոք-շոուները/հաղորդումները ենթակա կլինեն հեռարձակման ժամային սահմանափակման, ինչը ողջամիտ չէ: Այս դիտարկումն արվում է այն համատեքստում, որ ի տարբերություն Օրենքի գործող կարգավորման, որով կարգավորող պետական մարմինը սահմանում է նման **հաղորդումների որոշման չափորոշիչները,** Նախագծով նշված հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնի շրջանակներում կարգավորող պետական մարմինը իրավասու է սահմանելու միայն տեսալսողական հաղորդումների նկատմամբ տարածվող **չարաշահման արգելքների չափորոշիչները,** բայց ոչ բացառել կամ ներառել այս կամ այն բռնության տեսակը: Նշվածի համատեքստում խնդրահարույց է դառնում նաեւ «պարունակող» եզրույթն այնքանով, որքանով բռնության որոշ տեսակների առկայությունը ֆիլմում կամ հաղորդումներում կարող է պայմանավորվել հենց սյուժեով՝ անկախ բռությունն ուղղակիորեն ցուցադրել-չցուցադրելու հանգամանքից: Առաջարկում ենք հստակեցնել, թե նշված դրությում ինչ բռնության մասին է խոսքը, ինչպես նաեւ ըստ այդմ ըստ անհրաժեշտության հստակեցնել «պարունակող» եզրույթի բովանդակությունը:

5. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ (Նախագծի հրապարակված տարբերակում թվագրումը խախտված է, 7-րդի փոխարեն նշված է 6-րդ) մասում (պահպանվել է Օրենքի գործող ձեւակերպումը) «արհեստական» բառը հանել կամ փոխարինել այլ, օրինակ «տեխնիկական եւ

ծրագրային» բառերով այնքանով, որքանով նման արգելքների նկատմամբ առերեւույթ կիրառելի չեն «արհեստական» կամ «բնական» եզրույթները: «Արհեստական» բառը «տեխնիկական կամ ծրագրային» բառով փոխարինելու դեպքում անհրաժեշտ կլինի նույն դրույթում «ներդրման» բառից հետո նշված «տեխնիկական» բառը հանել:

Առաջարկում ենք նույն դրույթում փակագծերում նշված «կոդի» բառը (պահպանվել է Օրենքի գործող ձեւակերպումը) հանել կամ լրացնել «գրանցման կամ հաղորդման հասանելիության համադրելի այլ նախապայմանների» բառերով, քանի որ հաղորդման կամ բովանդակության հասանելիությունը միայն որոշ պայմանների դեպքում տրամադրելու մեխանիզմները (Conditional Access Systems) չեն սահմանափակվում միայն կոդով:

6. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում, ինչպես նաեւ Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող Օրենքի 58.1-րդ հոդվածի 3-րդ (Նախագծի հրապարակված տարբերակում թվագրումը խախտված է, 3-րդի փոխարեն նշված է 2-րդ) մասի 3-րդ կետում «տեղեկատվություն» բառը փոխարինել «տեղեկություն» բառով, քանի որ նշված դեպքերում առերեւույթ խոսք է գնում ոչ թե «տեղեկատվության» (տեղեկությունը փնտրելու և ստանալու, տեղեկությունը տրամադրելու գործընթացի), «տեղեկության» (անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ ստացված կամ ձևավորված տվյալների) մասին (տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ըստ այդմ «տեղեկատվություն։ տարածել» արտահայտությունը կրկնաբանություն է եւ ճիշտ չէ):